

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/1

11 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Տիգրան Մոսինյանի 13.10.2014 թ-ի գանգատը «ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 30.04.2014 թ-ի թիվ 285 որոշման դեմ:

Ա/Ձ Տիգրան Մոսինյանի գանգատում բերված փաստարկները.

2009 թ-ի փետրվարին Ա/Ձ Տիգրան Մոսինյանը (այսուհետ նաև գանգատաբեր) գրանցվել է որպես անհատ ձեռներեց, սակայն տեսնելով, որ չի հաջողվում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ 2009 թ-ի մայիսին դիմել է Արաբկիրի ՀՏ հանձնելու անհատ ձեռներեցի վկայականը: Արաբկիրի ՀՏ աշխատակիցը նշում է կատարել դիմումի վրա, որ սոցվճարների գծով պարտքը կազմում է 20.000 դրամ, սակայն հրաժարվել է ընդունել անհատ ձեռներեցի վկայականը, պատճառաբանելով, որ մինչև գանգատաբերը չմարի 20.000 դրամի պարտավորությունը, չի ընդունի վկայականը: Քանի որ այդ պահին գանգատաբերն ի վիճակի չի եղել վճարել նշված 20.000 դրամը, խնդրել է կանգնեցնել սոցվճարների գծով պարտավորության հետագա աճը, սակայն խնդրանքը մերժվել է: Այնուհետև գանգահարել է Արաբկիրի ՀՏ մի աշխատակից և հրավիրել է տեսչություն: Հարկային տեսչություն այցելելուց հետո գանգատաբերը պարզել է, որ սոցվճարների գծով գումարը դարձել է 70.000 դրամ: Գանգատաբերը փորձել է բացատրել, որ չի զբաղվում ոչ մի գործունեությամբ, ի վիճակի չէ վճարել այդ գումարը և կրկին առաջարկել է վերցնել անհատ ձեռներեցի վկայական: Սակայն պատասխանել են, որ միայն 70.000 դրամը վճարելուց հետո կվերցնեն վկայականը:

Որոշ ժամանակ անց գանգահարել է Արաբկիրի ՀՏ մեկ այլ աշխատակից և ասել, որ պարտքը կազմում է 90.000 դրամ: Գանգատաբերը բազմիցս խնդրել է վերցնել վկայականը և կասեցնել սոցվճարների չհիմնավորված աճը, սակայն մերժվել է:

2010 թ-ի հոկտեմբերին հերթական անգամ այցելել է Արաբկիրի ՀՏ: Սպասարկման սրահի աղջիկներից մեկը խորհուրդ է տվել փոստով ուղարկել անհատ ձեռներեցի վկայականը: Արդյունքում, գանգատաբերը Հայփոստի միջոցով Արաբկիրի ՀՏ է ուղարկել վկայականը, որն ընդունվել է:

Այնուհետև գանգատաբերն այցելել է Արաբկիրի ՀՏ իմանալու, թե որ դրույթի համաձայն առձեռն չէին վերցնում անհատ ձեռներեցի վկայականը: Ի պատասխան՝ ստացել է Արաբկիրի ՀՏ պաշտոնյայի կոպիտ արտահայտությունը, թե վկայանը ներկայացվելու դեպքում այն կընդունվեր: Գանգատաբերը հայտնել է, որ չնայած սոցվճարների համակարգը չի ընդունում, սակայն այնուամենայնիվ պատրաստ է վճարել միայն 20.000 դրամը: Պաշտոնյան մերժել է առաջարկը:

Վերոգրյալ դեպքից անցել է 4 տարի: Սույն թվականի ապրիլին գրություն է ստացվել Արաբկիրի ՀՏ-ից, որ 2009 թ-ի փետրվարից մինչև 2010 թ-ի հոկտեմբերը սոցվճարների գծով պարտավորության առկայության վերաբերյալ: Գանգատաբերն այցելել է Արաբկիրի ՀՏ, որտեղ իրեն պատասխանել են, որ պարտավոր է վճարել սոցիալական վճարի գծով պարտավորությունը: Այնուհետև գանգատաբերը գրավոր

հարցում է ներկայացրել Արաբկիրի ՀՏ, սակայն ստացվել է պատասխան, որը ոչ մի կապ չունի իր հարցման հետ՝ չի պատասխանվել ոչ մի հարցի:

Գանգատաբերը խնդրել է իր նկատմամբ կիրառել վաղեմություն, քանի որ նշված ժամանակահատվածից անցել է ավելի քան երեք տարի, սակայն Արաբկիրի ՀՏ կողմից խնդրանքը մերժվել է:

Այժմ, երբ անցել է 4 տարի, գանգատաբերից պահանջում են չհիմնավորված գումար միմիայն նրա համար, որ գրանցված է եղել որպես անհատ ձեռներեց և դեռ ամեն կերպ խոչընդոտել են, որ չկարողանա ժամանակին վերադարձնի վկայականը:

Գանգատաբերի պնդմամբ գործունեություն չի իրականացրել, շահույթ չի ստացել, սակայն ըստ Արաբկիրի ՀՏ առկա է պարտք, որը չվճարելու դեպքում կդիմեն ԴԱՀԿ:

Պետական գրանցման անհատ ձեռներեցի 01Ա136725 վկայականն Արաբկիրի ՀՏ հանձնելու դիմում ներկայացվել է 2009 թ-ի մայիսի 8-ին, որի վրա առկա է տեսչության դիմումին ընթացք տվող աշխատակցի ստորագրությունը և նշումն այն մասին, թե որքան է կազմում սոցվճարների գծով պարտավորությունը: Հետևաբար, վկայականը հանձնած լինելու ժամկետը համարվում է 2009-ի մայիսի 8-ը, հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը: Եթե այս պնդման հետ Արաբկիրի ՀՏ-ն համաձայն չէ, ապա թող հերքի ներկայացված տեղեկությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել Արաբկիրի ՀՏ 30.04.2014 թ-ի թիվ 285 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Տիգրան Մոսինյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 2014 թ-ի ապրիլի 30-ին ընդունել է թիվ 285 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 20.04.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Տիգրան Մոսինյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 162.488 դրամ (2009 թ-ի փետրվարից մինչև 2010 թ-ի հոկտեմբեր ամիսների նվազագույն սոցիալական վճար), որը ենթակա գանձման:

Սույն գործում առկա է Ա/Ձ Տիգրան Մոսինյանի 08.05.2009 թ-ի դիմումը (այսուհետ նաև Դիմում), որի համաձայն գանգատաբերը դիմել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու և պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հանձնելու համար:

Դիմումի վրա առկա է կրճատ գրառում, որն ըստ էության նշանակում է, որ 08.05.2009 թ-ի դրությամբ Ա/Ձ Տիգրան Մոսինյանի սոցիալական ապահովության վճարի գծով պարտքը կազմում է 21.500 դրամ:

Գանգատաբերը նշում է, որ թե Դիմումը ներկայացնելու օրը, թե դրանից հետո Արաբկիրի ՀՏ կատարված իր բազմաթիվ այցելությունների ժամանակ փորձել է հանձնել անհատ ձեռներեցի գրանցման վկայականը, սակայն հիմք ընդունելով Դիմումի վրա կատարված գրառումը՝ սոցիալական ապահովության վճարի գծով 21.500 դրամի չմարված պարտավորություն ունենալու վերաբերյալ, վկայականը չի

ընդունվել Արաբկիրի ՀՏ կողմից, և միայն փոստային ծառայության միջոցով վկայականը ուղարկվելուց հետո այն վերջինիս կողմից ընդունվել է:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Տիգրան Մոսինյանի կողմից ներկայացված Դիմումի վրա Արաբկիրի ՀՏ աշխատակցի կատարած գրառումը՝ 08.05.2009 թ-ի դրությամբ Ա/Ձ Տիգրան Մոսինյանի սոցիալական ապահովության վճարի գծով պարտքը 21.500 դրամ կազմելու վերաբերյալ, ըստ էության, հիմնավորում է վերջինիս կողմից Դիմումը 08.05.2009 թ-ին Արաբկիրի ՀՏ ներկայացված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Տիգրան Մոսինյանի կողմից 08.05.2009 թ-ին ներկայացված դիմումը՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու և պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հանձնելու վերաբերյալ, անհրաժեշտ է ընդունված համարել 08.05.2009 թ-ից: Այսինքն, 08.05.2009 թ-ից հետո ընկած ժամանակահատվածի համար սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտավորությունները ենթակա են նվազեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 30.04.2014 թ-ի թիվ 285 որոշումից նվազեցնել 08.05.2009 թ-ից հետո ընկած ժամանակահատվածի համար սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտավորությունները:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՄՅԱՆ

